Տնօրեն՝ Հաստատում եմ՝
Կ. Բալաբեկյան

«2022 – 2023» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ - Ի
ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՊԼԱՆ

«2022 – 2023» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ - Ի ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

2022– 2023 ուս. տարում Ձիթհանքովի միջն. դպրոցի մանկավարժական հանրույթի և դպրոցական խորհրդի առաջնահերթ խնդիրն է.

Ա	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող անձ	Ժամկետը
1	Կրթական բարեփոխումների ծրագրի հիման վրա դպրոցում կարևորագույն համարել կրթության որակի բարձրացման խնդիրը, որպեսզի սովորորողներն ապավինեն իրենց գիտելիքներին: Աշխատանքները տանել 4 հիմնական ուղղություններով՝ հանրակրթության կրթակարգի. առարկայական և ուսումնական ծրագրերի, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում, ուսուցիչների մասնագիտական կատարելագործում, դպրոցի համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում	Տնօրինություն մանկ. հանրույթ Առարկայական մասնախմբեր	Ուս տարվա ընթացքում
2	Սովորողներին զինել բնության և հասարակության մասին այն անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություն-ներով, որ մարդկությունը կուտակել է դարերի ընթացքում: Նպաստել անձի աշխարհայացքի և անհատի ձևավորմանը	Տնօրինություն մանկ. հանրույթ Առարկայական մասնախմբեր	Ուս տարվա ընթացքում
3	Իրականացնել անձի համալիր ու հարմոնիկ դաստիարակու-թյուն, որի արդյունավետության համար կարևոր է սովորողների ուսման և արժեքային համակարգի զարգացման միասնությունը:	Տնօրինություն դպր-ն խորհուրդ մանկ. հանրույթ	Ուս տարվա ընթացքում
4	Շեշտը դնել անհատականությունների ձևավորման և յուրա-հատկությունների վրա, ուշադրություն դարձնել ազգային և համամարդկային արժեքներին և բնապահպանությանը:	Տնօրինություն մանկ. հանրույթ Առ. մասնախմբ.	Ուս տարվա ընթացքում
5	Նպաստել և օժանդակել խաղաղության, մարդու իրավունքների, ձեռքբերումների . հանդուրժողականության, միջազգային և միջ-մշակութային, համերաշխության և համագործակցության, ժո-ղովրդական գործընթացների ամրապնդմանը:	Տնօրինություն մեթոդմիավո-րումներ	Հոկտեմբեր
6	Հայ երեխային դաստիարակել ազգային ոգով՝ ոչ միայն կրթությունը ազգայինլեզվով իրագործելով.այլև համամարդկային արժեքներին զուգընթաց ազգային ոգու, մտածելակերպի, հոգե-բանության,վարքագծի արմատավորմամբ. հասարակությանը տալ հայեցի, ազնիվ,-ինտելեկտով ու գիտելիքներով զինված շրջանավարտներ;Պատրաստել հայրենիքի վերածննդի համար անհրաժեշտ տնտեսական, արժեքային, գիտատեխնիկական, կրթական, մշակութային,հոգևոր խնդիրները լուծելու ունակ սե-րունդ: Իրականացնել 12-ամյա կրթական յուրաքանչյուր աս-տիճանի շրջանավարտների պատրաստվածության մարդուն ներկայացող հիմնական պահանջները:	Տնօրինություն մեթոդմիավո-րումներ	Ուս տարվա ընթացքում
7	Հանրակրթության նպատակը քաղաքացիների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ընդունակությունների դրսևորման, արժեքային համակարգի զարգացման համար բարենպաստ պայմաններ	Մանկ. հանրույթ, դպրոցի խորհուրդ,	Ուս տարվա ընթացքում

	ստեղծելն է: Բարեփոխումների հիմնական խնդիրներն են՝	մայրենիի ուսուցիչներ	
ա	Սովորողների կողմից բնության, կյանքի , հասարակության, տեխնիկայի,արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը:	Մանկ. հանրույթ, դպրոցի մայրենիի ուսուցիչներ, դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
բ	Համամարդկային, ազգային և հոգևոր արժեքներին հաղորդակից . ազգային մշակութային և բարոյահոգեբանական ժառան-գության կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունե-ցող անհատ և քաղաքացի ձևավորելը:	Մանկ. հանրույթ, մայրենիի ուսուցիչներ, դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
գ	Սովորողների ռազմահայրենասիրական և նախնական զին-պատրաստության համալիր ծրագիր իրականացնելը. ըստ 12-ամյա կրթության 3 աստիճանների շրջանավարտների պատրաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները հենվում են սովորողների տարիքային և անհատական , հոգե-բանական առանձնահատկությունների վրա:	Մանկ. հանրույթ, դպրոցի խոր-հուրդ, մայրենիի ուսուցիչներ,դաս-ղեկներ, զինղեկ	Ուս տարվա ընթացքում
դ	Ազգային պետական խորհրդանիշերի միջոցով նպաստել հա-յության ինքնության արմատավորմանը, սեփական ազգի պատ-մության և պետության կայացման գործում մասնակցելու հնա-րավորության ստեղծմանը, հայրենասիրության ու ազգային ո-գով դաստիարակությանը:	Մանկավարժա-կան համակազմ	
ե	Կրտսեր դպրոցականների /6-10տ./ տարիքային բնութագիրը ստեղծվում է նրանց ֆիզիկական և հոգևոր զարգացման որակների և մակարդակների, նյարդային համակարգի, շարժումների, գլխուղեղի կիսագնդերի աճի, ըմբռնման, ուշադրության տեսակների, հիշողության բնույթի մտածողության. խոսքի, զգա-յական և կամայական հատկանիշների, հետաքրքրություններ-ի շրջանակի և աշխատանքային գործունեության առանձնա-հատկությունների վրա: Օգնել դասվարին համապատասխան պահանջներով կազմակերպել կրտսեր առաջին դասարանի ուսուցման և դաստիարակության գործընթացը:	Դասվարների մեթոդմիավո-րում, դասվար	Առաջին կիսամյակի ընթացքում
8	Դպրոցում բացել նախակրթարան 5 տարեկան երեխաների համար մեկ խումբ, կապ պահպանելով համայնքի,ծնողների և համայնքապետարանի հետ: Հոգ տանել նախակրթարանի աշխատանքների արդյունավետ անցկացնելու, նրանց խաղի կազմակերպման, առաջացած խնդիրների լուծման հարցերում: "Առաջին դասարան տեղափոխել ուսման գործընթացին պատրաստ սովորողներ..կարգախոսով ծավալել աշխատանքները նախակրթարանում;	Դաստիարակներ դասվարների մասնախումբ	սեպտեմբեր
9 ա	Միջին դպրոցական տարիքում /անցում դեռահասությունից դեպի պատանեկություն 11-15/ հաշվիեն առնվում դեռահասի մանկա-կան աճի արագությունը,ներքին որոշ օրգանների անհամաչափ զարգացումը, սեփական հասունացումը և դրա հետևանքով ֆիզիկական և հոգևոր հոգնածությունը, անտարբերու թյունը, հիշողության, ըմբռնման, ուշադրության թուլացումը, խիզախու-թյունը, մտածողության , կամքի և զգացմունքների բնավորու-թյան ձևերի առանձնա հատկությունները: Ավագ դպրոցական տարիքում /վաղ պատանեկության 15-18տ. / կարևորվում է պատանիների ֆիզիկական և հոգևոր զարգաց-ման չափանիշների կայացումը, քննդատական վերաբերմուն-քը շրջապատի և մարդկանց նկատմամբ, խոսքի և մտածողության զարգացման նոր որակներ: Այդ տարիքում տեղի են ունենում	դասղեկներ տնօրենի տեղակալներ,առա-ջիկայական մասնախմբերի նախագահներ ,ուսուցիչներ	Ուս տարվա ընթացքում

Բ	քաղքացիական պարտքի գիտակցության մշակում, սոցիալիասարակական ուղղվածության և անհատական տվյալների դաստիարակություն: Տարրական /կրտսեր/ դպրոցում ուսուցումը նպատա կաուղղ-ված է լեզվամտածողության և մաթեմատիկական տրամա-բանության հիմքերի, ուսումնառության աշխատանքային նախ-նական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդ-կային արժեքների նախնական հաղորդկցմանը: Միջին դպրո-ցում նպատակաուղղվում է լեզվամտածողության, առողջ ապրե -լակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, աշխատանքային, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ապահովմանը:	Դասղեկներ, դասվարներ Առարկայական մասնախմբերի նախագահներ	ՈՒս. տարվա ընթացքում
Գ	Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է հանրակրթական պատրատվածությանը ապահովող գիտելիքների յուրացմանը: Հանրակրթական դպրոցում հատուկ ուշադրություն դարձնել 2022 - 2023 ուստարում աշխատանքները որակապես նոր մակարդակի բարձրացնելու,սովորողների կողմից գիտելիքների հիմունքների յուրացմանը կապելու կյանքի, աշխատանքի հետ, նրանց մոտ դաստիարակել հայրենիքի նկատմամբ սեր, բարոյական - մարդկային անաղարտություն:	տնօրենի տեղակալներ ուսուցիչներ, դասղեկներ	Ուս. Տարվա ընթացքում
10	Մանկավարժների հոգեմտավոր ներուժը ուղղորդել ուսումնա դաստիարակչական աշխատանքների որակի բարձրացման . յուրաքանչյուր առարկայի դասավանդման. որակի ապահով_ ման, դպրոցականների կողմից գիտելիքների հիմունքների տիրապետման խնդիրներին, ինչպես նաև աշակերտների ծան-րաբեռնվածության վերացման վրա:	Դասղեկներ, մանկավարժներ	Ուս տարվա ընթացքում
11	Ամեն կերպ բարձրացնել դասի արդյունավետությունը, հասնել այն բանին, որ աշակերտներն ուսուցումը դիտեն որպես իրենց հիմնական, առաջնային գերխնդիրը, ձգտեն գիտելիքների բար-ձունքներին, ձեռք բերեն ու զարգացնեն կարողություններ և հմտություններ, կարևորեն առաջանցիկ զարգացման երաշխիքները: Մանկավարժները վերանայեն դպրոցի աշխատանքը ծնողների հետ; Հիմնական ջանքերն ուղղորդել դպրոցականների նախասիրական տարրերի, արտադպրոցական պարապմունքների կազմակերպմանն ու անցկացմանը: Ծնողներին ուղղություն տալ երեխաների հետ տարվող աշխատանքներում;	ուսումնական գծով տնօրենի տեղակալ, առարկա-յական մասնա-խմբերի նախա-գահներ,ուսուցիչն եր	Առաջին կիսամյակի ընթացքում
12	Ամենօրյա աշխատանքների միջոցով հասնել այն բանին, որ նոր ուստարում նորմատիվ փաստաթղթերը սովորողների վարքի կանոնները. նրանց հասարակական ակտիվության բարձրա-ցումը, աշակերտների մոտ ինքնավարութուն ու հոգեկերտվածք զարգացնելու հիման վրա, կատարվեն անշեղորեն:	ՄԿԱ. գծով, տնօրենի տեղակալ, կազմակերպիչ	Առաջին կիսամյակի ընթացքում
13	Ուժեղացնել ուշադրությունը ուսումնադաստիարկչական գործ-ընթացի հետագա կատարելագործման, տեսական-քաղաքական և աշխատանքային մակարդակի բարձրացման վրա, հետևո-ղականորեն զարգացնել դասավանդման մեթոդները,արդյունա-վետորեն կիրառել տեխնիկական միջոցները, ուսումնական համակարգում աշխատել համակարգիչներով;	ուս. գծով,տնօրենի տեղակալ Ուսուցիչներ	Առաջին կիսամյակի ընթացքում

14	Որակապես բարձրացնել բնական-մաթեմատիկական ցիկլի ա-ռարկաների դասավանդման մակարդակը, այն նպատակաուղ-ղել աճող սերնդի մոտ ժամանակակից տեխնիկայի հիմնական ճյուղերում գիտելիքները գործնականորեն կիրառելու խնդիրնե-րին, հատուկ ուշադրություն դարձնել ինֆորմատիկայի դասա. վանդման վրա, հարստացնել համակարգչային դասասենյակը;	ուսումն, . գծովտնօրենի տեղակալ, Բնագիտական առարկաների մասնախմբի նախագահ	Առաջին կիսամյակի ընթացքում
15	Սովորողների լեզվատրամաբանական մտածողության ձևավորման և զարգացնան նպատակով վերապահել ա-ռանձնահատուկ դեր տարրական, հիմնական և ավագ դպրոց-ներում, կրթական ողջ համակարգում:	ուսումն, . գծովտնօրենի տեղակալ, ,	Ուս տարվա ընթացքում
16	Ժամանակակից կյանքին անհրաժեշտ են գիտելիքներով, կա_ րողություններով , ինտելեկտով, հմտություններով օժտված և արժեքային համակարգերի մեջ կողմնորոշվող անհատներ, պատրաստ դիմակայելու ժամանակի մարտահրավերներին, ունակ՝որոշակի իրավիճակներում լուծելու խնդիրներ: Ուսուցիչ -ների առաջ մշտապես դնել կատարելագործվելու, անընդհատ սովորելու, մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները զարգացնելու պահանջներ:	մասնախմբերի նախագահներ	Ուս տարվա ընթացքում
17	Կրթական համակարգի "Հայոց լեզու և գրականություն". բնա_ գավառում առաջնորդվել կրթակարգի չափորոշիչներով, որոնք կոչված են ապահովելու մայրենի լեզվի լավ իմացություն, սերտ հաղորդակցություն ազգային մշակույթի,դրանց միջոցով էլ կա_ պակցել համաշխարհային գրականության և մշակույթի հետ: Լեզվական գիտելիքներն իրենց բնույթով, շարադրանքով պետք է ունենան որոշակի գործնական ուղղվածություն, ճանաչողական _կիրառական արժեք: Հատուկ ուշադրություն դարձնել սո_ վորողների ընթերցանության զարգացման վրա, նրանց կապել գրադարանի և գեղարվեստական գրականության հետ:	Հումանիտար առարկաների, մասնախմբի նախագահ	Ուս տարվա ընթացքում
18	Գրականության միջոցով դաստիարակել համակողմանի զարգացած համամարդկայնորեն մտածելու ընդունակ քաղաքացիներ, նպաստել նրանց աշխարհայացքի ձևավորմանն ու ամբողջացմանը, սովորողներին ծանոթացնել հայ և համաշխարհային գրականության,ժողովրդական բանահյուսության ընտիր էջերին նպաստել ազգային լեզվի ուսուցման կատարելագործմանն ու գործնականացմանը,սովորողների հայեցի դաստիարակութ_նը:	Մայրենիի ուսուցիչներ, մեթոդմիավորման նախագահ	Ուս տարվա ընթացքում
19	Հանրակրթական դպրոցներում դասավանդվում է "Հայոց եկե_ ղեցու պատմություն" առարկան: Դասավանդման ընթացքում առաջնորդվել «Անաղարտ պահենք հայոց լեզուն մեր մանկանց շուրթերին և ամուր՝ հայոց հավատքը՝ նրանց հոգիներից ներս, որպեսզի ապրի ազգը հայոց վստահությամբ իր հայացքնուղղած դեպի նոր ժամանակների լույսը " կարգախոսով և շարունա-կական դասընթացներով խորացնել գիտելիքները առարկայի նկատմամբ: Ձևավորել պատի ստենդ ,,Իմ հոգին զույգ հենարան ունի՝ Աստված և Հայրենիք .. խորագրով:	Հայոց եկեղեցու պատմության ուսուցիչ	Ուս տարվա ընթացքում
20	Հայոց և համաշխարհային պատմությունների դասավանդման ընթացքում սովորողներին մատչելի և պարզ գիտելիքներ հաղորդել հասարակության ձևավորման զարգացման վերաբերյալ, ծանոթացնել այդ քաղաքակրթությունների ստեղծման արժեքներին:Ծանոթացնել ազգային և համամարդկային	Պատմության ուսուցիչ,Առարկայ ական մասնախմբի նախագահ	Ուս տարվա ընթացքում

	արժեքներին :		
21	Պատմաաշխարհագրական և հումանիտար առարկաների կատարելագործումը նպատակաուղղել սովորողների արժեքային ու ճանաչողական զարգացմանը:	Առարկայական մասնախմբի նախագահ	Ուս տարվա ընթացքում
22	Տարվա ընթացքում կազմակերպել էքսկուրսիաներ դեպի Երևանի Պատմության և Սարդարապատի թանգարաններ, Մատենադարան: Աշխարհագրության ուսումնասիրության հնարավորությունները լիարժեք ձևով օգտագործել սովորողների տնտեսագիտական և էկոլոգիական կրթության գործում:	կազմակերպիչ, դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
23	Ծառապատել ու կանաչազարդել դպրոցամերձ ճանապարհներն ու դպրոցի բակը, կազմակերպել շաբաթօրյակներ:	Կրթական.աջակցությունների գծով փոխտնօր, մանկակ. կոլեկտիվների կազմակերպիչ	Ապրիլ Ուս. տարվա ընթացքում
24	Համալիր միջոցառումներ ձեռնարկել սովորողների գեղագիտական, բարոյահիրավական դաստիարակությունը և նրանց արժեքային համակարգը բարելավելու համար, հասնել ընտանիքում և դպրոցում բարոյագիտական պահանջների միասնությանը: Կազմակերպել, միջոցառումներ, հետևյալ թեմաներով: - "Ոսկե աշուն", <<Աշնան գույներ>> -«Դու հավերժող իմ Հայատան» նվիրված Անկախության 31ամյակին - Հուշ –ցերեկույթ նվիրված քառօրյա պատերազմում զոհվածների հիշատակին - "Իմ ուսուցիչ, իմ անգին" - Համադպրոցական միջոցառում «1915թ. Ապրիլ...Այլևս՝ երբեք»,«Աշխարհը և Մեծ Եղեռնը>>-նվիրված Ցեղասպանության 108-ամյակին : «Ապրիլյան պատերազմի հերոսները - Ցեղասպանությունների միջազգային ճանաչումն ու դատապարտումը: ,,Բավ է, աշխարհի մարդիկ... եղեռն, ռուանդա, հոլոքոստ, սեյֆո, մեգալի: Աշակերտների շրջանում լայն աշխատանք ծավալել տոների, տոնակատարությունների ուղղությամբ, յուրաքանչյուր ուսուցչի և աշակերտի մասնակցությունն ապահովել նշված տարելիցների տոնակատարությանը:	Հումանիտար մեթոդմիավորում, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, կազմակերպիչ. դասղեկներ Դասղեկներ, դասվարներ, ուսուցիչներ	Ուս տարվա ընթացքում Ուս. տաւվա ընթացքում

24	Սիստեմատիկ աշխատանք տանել սովորողների ռազմահայրե-նասիրական դաստիարակության և ազգային զինված ուժերում ծառայելու նախապատրաստման ուղղությամբ: Հատուկ ուշա-դրություն դարձնել սովորողների ռազմահայրենասիրական և ռազմասպորտային ունակությունների և հմտությունների զար-գացմանը, աշխատել «Մեզ առողջ և ուժեղ սերունդ է պետք» սկզբունքով:Կազմակերպել և անցկացնել ռազմահայրենասիրական խաղեր և ապահովել թիմի մասնակցությունը տարածքային մրցումներին:	Ֆիզկուլտուրայի ուս. զինղեկ	Ապրիլ-մայիս թ
25	Առանձնահատուկ ուշադրություն դարձնել դպրոցի սպորտային դաստիարակության գործին: Բարձրացնել ֆիզկուլտուրայի դասավանդման որակը, մեծ տեղ տալ, ակտիվացնել սպորտա-յին խմբակների գործունեությանը: Կազմակերպել հետիոտն արշավներ, էքսկուրսիաներ,: Ամեն կերպ ձգտել դաստիարակել առողջ, կոփված սերունդ ,կահավորել և հարստացնել շախմատի դասասենյակը; **<u>Կատարելագործել ուսուցման մեթոդներն ու միջոցները՝ առաջին պլան մղելով ակտիվ ու արդյունավետ ձևերը, ապահովելով ուսման բարձր որակ ու արդյունավետություն:</u>** Աշակերտների մոտ դաստիարակել և ձևավորել աշխատասի-րություն, ինքնուրույնություն, բարձրին և կատարյալին ձգտելու անհրաժեշտություն: Աշխատել՝«Գիտելիքը կատարյալի ձգտումն է» սկզբունքով:	Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ զինղեկ, կազմակերպիչ	Ուս տարվա ընթացքում Ուս.տարվա ընթացքում
1	Ժամանակին հայտնաբերել ուսման մեջ ետ մնացած և դժվար դաստիարակվող սովորողների թերությունները, փնտրել և գտնել դրանք վերցնելու ամենարդյունավետ միջոցները: Համառ-ռեն հաղթահարել մանկավարժության մեջ տեղ գտած ձևակա-նությունը: Ընդլայնել ուսուցիչների հնարավորությունները ու-սուցման ու դասավանդման ձևերի ու մեթոդների ընտրության գործում: Ֆիզիկական և մտավոր թերություններ ունեցող երեխաներին	Դասղեկներ տնօրենի տեղակալներ, Առարկայական մասնախմբեր	Ուս տարվա ընթացքում

	տեղավորել դպրոցում,անցնել համընդհանուր 12-ամյա կրթու-թյան, կազմակերպել զրույցներ ծնողների հետ, առանձնահա-տուկ աշխատանք տանել ներառական կրթության ուղղությամբ, ստեղծել հատուկ պայմաններ նման երեխաների համար,աշխատել ,Ես մեծանում եմ իմ հասակակիցների կողքին,,առաջաբանով: Դիտարկել սովորողներին և անհրաժեշտության դեպքում դիմել Արթիկի թիվ 1 դպրոց՝ բազմամասնագիտական խմբի կողմից կատարելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում	Ուսուցիչներ , տնօրինություն, ուսուցչի օգնական	սեպտեմբեր
2.	Առավել արդյունավետ և կազմակերպված անցկացնել սովորողների ազատ ժամանակը, բազմաբնույթ միջոցառումների միջոցով նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, հարմոնիկ և ներդաշնակ զարգացմանը, ստեղծել դպրոցի առաջանցիկ զարգացման երաշխիք բոլոր բնագավառներում: Դասղեկների առաջնահերթ խնդիրն համարել գործուն միջոցների ձեռնարկումը, դասարանների ուսման առաջադիմության բարձրացումը և գիտակցական կարգապահության ամրապնդումը; 3.Կանխել անհարգելի բացակայությունները և ուշացումները, ապահովել «Աշակերտի վարքի կանոնները» հրահանգի անշեղ կատարումը և վարքի գնահատման նորմաները:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ կազմակերպիչ	Ուս տարվա ընթացքում, սեպտեմբեր Սեպտեմբեր, հոկտեմբեր
Գ.	Ակտիվացնել աշակերտական խորհրդի աշխատանքները: Աշխատանքում հատուկ տեղ տալ սովորողների նախասիրությունների և հակումների զարգացմանը, լույս ընծայել պատի թերթեր: *Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, նրանց որակավորման բարձրացումը:*	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ,կազմակ երպիչ	Ուս տարվա ընթացքում
1.	Սիստեմատիկ աշխատանք տանել հանրակրթական դպրոցի սովորողների մոտ դեպի մանկավարժական կրթությունը կան-խորոշելու գործում:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Ուս տարվա ընթացքում
2	Հոգ տանել մանկավարժական կադրերի ապահովման համար, պայմաններ ստեղծել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի: Դասապրոցեսի արդյունավետությունը պարզելու համար կազմակերպել մշտադիտարկումներ հետևյալ ուղղորդումներով՝ բանավոր գնահատում,տնային աշխատանքի կատարում, սովորողների ինքնուրույն աշխատանքը դասի ընթացքում, ուսուցչի աշխատանքը ետ մնացող աշա-կերտների հետ,սովոողների մասնակցությունը դասերին, աշ-խատանքը կրկնողությունների ժամանակ, նոր մեթոդների ու հնարների կիրառումը դասերի գործընթացում, որոնց ընթացքում վեր հանել վնասող թերությունները և դասերի համատեղ պլանավորման միջոցով շտկել դրանք;	ուսումն, . գծովտնօրենի տեղակալ	Ուս տարվա ընթացքում
3	Ուսուցիչներին մեթոդական-մանկավարժական օգնություն ցույց տալու	ուսումն	Ուս տարվա

.	նպատակով ուս. տարվա ընթացքում ուսումնասիրել ուսուցիչների աշխատանքը՝ ուսումնասիրությունների, գրավոր աշխատանքների միջոցով, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում: Վերափոխել աշխատանքը՝ բարեփոխումների ժամանակակից պահանջներից ելնելով: Կազմակերպել փորձի փոխանակում :	գծովտնօրենի տեղակալ	ընթացքում
5.	Դասերի քննարկումներն անցկացնել մեթոդա-առարկայական հանձնախմբերում և մանկավարժական հանրույթի նիստերում:	Առարկայական մասնախմբեր	Ուս տարվա ընթացքում
6	Ուսուցիչներին առարկայական մեթոդամանկավարժական անհրաժեշտ օգնություն ցույց տալու նպատակով դպրոցում ստեղծել առարկայական 3 մասնախմբեր - Բնագիտական առարկաների - Հումանիտար - Դասվարների - Տարբեր օղակներում ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ և զեկուցումներ, առարկայական ու-սումնասիրման տասնօրյակներ: - Դպրոցականների ընդհանուր կարողությունների և հմտու-թյունների զարգացման մասին.,, Ինչպես կազմակերպել սո-վորողների դաստիարակչական աշխատանքը՝ ըստ տարիքային ու անհատական առանձնահատկությունների,,: - Ուսուցիչը հասարակության մեջ - Դպրոցի և ընտանիքի համատեղ աշխատանքը հանուն երե-խայի ուսուցման ներդաշնակ զարգացման: - Ուսումնադաստիարակչական գործընթացի ղեկավարումը: - Սոցիալ-տնտեսական և արդի գիտատեխնիկական առաջա-դիմության պահանջներին, բարեփոխության, բարեկրթու-թյան,ազգային կրթական բովանդակության բարձրացման, սովորողների տարիքային, անհատականառանձնահատկու-թյուններին համապատասխան ուսումնադաստիարակչա-կան գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է՝	ուսումն, . գծովտնօրենի տեղակալ Բ/ Մինասյան Տ. Սարգսյան Ա. Մաղաքյան Ֆ. Բեյբության Դասղեկներ , ուսուցիչներ, տնօրինություն	սեպտեմբեր
7	Ստեղծել ստենդներ, ալբոմներ, լույս ընծայել պատի թերթեր, , էքսկուրսիաներ,	Առ. մասնախմբ., ուսուցիչներ	2-րդ կիս. ընթացքում
8	Ամենօրյա աշխատանք տանել ուսուցանվող առարկաների դասերի գործընթացը արդյունավետ և բարձր որակով անցկացնելու համար: Հետևողական աշխատանք տանել դժվար դաստիարակվող , ծնողազուրկ, անհաջողակ ըիտանիքների սովորողների հետ:	տնօրենի տեղակալներ	Ուս տարվա ընթացքում
9	Ուսուցիչների կարևորագույն խնդիրն համարել հստակությամբ շարադրել առարկաների հիմնական, կարևոր հասկացություններն ու գլխավոր խնդիրները, սովորողներին նախապատրաստել և մասնակից դարձնել մարզային և հանրակրթական առարկայական օլիմպիադաներին, որոնց միջոցով փնտրել և գտնել տաղանդավոր սովորողներին:	տնօրենի տեղակալներ	Ուս տարվա ընթացքում
10	Դպրոցի տնօրինության կողմից ամենօրյա հսկողություն սահմանել գործնական և լաբորատոր պարապմունքների և ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման գործում: Դասեր վարել համակարգիչների օգնությամբ, նոր ու արդյունավետ մեթոդներով;	տնօրենի տեղակալներ	Ուս տարվա ընթացքում
11	Սովորողներին զինել ժամանակակից հաշվողական տեխնիկա-յի օգտագործման գիտելիքներով և հմտություններով: Հատուկ ուշադրություն դարձնել "Ինֆորմատիկա և հաշվողական տեխ_ նիկա" առարկայի դասավանդման վրա, ստեղծել "Տեխնիկայի և ինֆորմատիկայի" անկյուն դպրոցում:	Ս. Խաչատրյան	Ուս տարվա ընթացքում
12	[illegible]	[illegible]	[illegible]

	առարկայից սովորողների գիտելիքներն ու կա ողությունները, տանել համապատասխան անհատական աշխա տանք՝ բացահայտելու սովորողների կարողություններն ու հմտությունները, զարգացնել նրանց մոտ աշխատասիրություն, ինքնուրույնություն, վստահություն սեփական ունակությունների նկատմամբ:	ների նախագահներ , տնօրենի տեղակալներ	ընթացքում
13	Օգնել ուսուցչին մշտապես կատարելագործել ուսուցման ձևերը և մեթոդները: Դասի հետ մեկտեղ լայնորեն կիրառել նաև դասեր-դասախոսություններ, սեմինար պարապմունքներ, կոնսուլ-տացիաներ: Օգնել նրանց մշակելու մտածողական ինքնուրույ-նություն ու կարողություն:	տնօրենի տեղակալներ մեթոդմիավո-րում	Ուս տարվա ընթացքում
14	Սովորողների գիտակցությանը հասցնել սեփական ազգային մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինել դրանց անմիջական կրողները:	Մեթոդմիավորում, ուսուցիչներ Վ. Բեյբության	Ուս տարվա ընթացքում
15	Անհրաժեշտ կարգով և վճռականորեն բարձրացնել աշկոմի հեղինակությունը, նրա դերը սովորողների գաղափարական դաստիարակության գործում, ուժեղացնել մանկավարժական օգնությունն ու ղեկավարությունը, բարձրացնել աշկոմի պա-տասխանատվությունը, ամեն կերպ պաշտպանել նրանց օգտա-կար ձեռնարկումները:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Կազմակերպիչ , դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
16	Աշկոմի առաջնահերթ խնդիրը համարել ուսման որակի բարձ-րացման, գիտակցական կարգապահության ամրապնդման հարցերը, ինքնաղեկավարման գործի կազմակերպումը: Մեծ տեղ տալ ինքնուրույն ձեռնարկումներին և ակտիվության ներ-շնչանքին, ապահովել մանկավարժական մոտեցում և վերա-հկողություն:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, կազմակերպիչ դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
17	Կրտսեր տարիքի սովորողներին օգնել կոլեկտիվում ապրելու և աշխատելու, իրենց ջանքերը օգտակար և պիտանի ուղղորդելու հմտություն, լավ սովորել, պատրաստվել աշխատանքին և հայ-րենիքի պաշտպանության, լինել օրինակելի, օգնել մեծերին, բա-րորապես կիրթ և կայուն գիտելիքներով նվաճել միջին դպրոցի բարձունքները, սիրել ու պաշտպանել հայրենիքը;	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, կազմակերպիչ դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
20	**<u>Կրթօջախում համալրել 12 դասարաններ 182 աշակերտ-ներով</u>** 1-ին դասարան- 12աշակերտ 2-րդ դասարան-14 աշակերտ 3-րդ դասարան – 12աշակերտ 4-րդ դասարան- 17աշակերտ 5-րդ դասարան -14աշակերտ 6-րդ դասարան-22աշակերտ 7-րդ դասարան- 17 աշակերտ 8-րդ դասարան-16աշակերտ 9-րդ դասարան – 21 աշակերտ 10-րդ դասարան -6 աշակերտ 11-րդ դասարան -17 աշակերտ 12-րդ դասարան-14 աշակերտ Նախակրթարան են հաճախում 22 սաներ: **<u>Դ.Ներդպրոցական վերահսկողություն և ղեկավարման խնդիրները</u>**	Տնօրինություն	մինչև 31.08.2019թ
21	Ընդհանուր միջնակարգ և մասնագիտական կրթության զարգա-ցումը ավելի մեծ նպատակներ և խնդիրներ է դնում դպրոցական տնօրինության և մյուս օղակների առջև մատաղ սերնդի կրթության և ներդաշնակ արժեհամակարգի բնագավառում:	Տնօրինություն , առարկայական մասնախմբերի նախագահներ	Ուս տարվա ընթացքում
22	Ժամանակակից մեթոդներով, հնարներով և ստեղծագործաբար	Մեթոդմիավորում	Ուս տարվա

	կատարելագործել ներդպրոցական ղեկավարման ձևերը, աշխա տանքի մակարդակը, դրանք բարձրացնել արդի պահանջնե-րին համապատասխան: Գնահատման սահմանված չափանիշները, նրանց աշխատանքը գնահատել ըստ սաների գիտելիքների հմտության, կայունության և արժեքային համակարգի աստիճանի ,ամենօրյա աշխատանքի միջոցով էլեկտրոնային մատյանում emis.am կայքում:	նախագահներ, Տնօրինություն	
23	Սիստեմատիկ ստուգման ենթարկել առարկայական ծրագրերը, թեմատիկ պլանները, դասաժամերի պլանկոնսպեկտները, սկսնակ ուսուցիչներին օգնության նպատակով հաճախակի կազմակերպել պլանկոնսպեկտների քննարկումներ և հրահանգավորումներ:	Մեթոդմիավորում ներ ուս.գծով տնօրենի տեղակալ	Ուս տարվա ընթացքում
24	Հետևել,որ ուսուցիչների կողմից էլեկտրոնային մատյանում գրանցումները լինեն ամենօրյա , թեմատիկ պլաններին համապատասխան:	տնօրեն	տարվա ընթացքում
25	Կազմակերպված և ըստ գրաֆիկի անցկացնել առարկայական կոնսուլտացիաները, ըստ գործող կարգի և հանգամանորեն նա-խապատրաստվել տարեվերջյան գիտելիքների ստուգման, ա-վարտական, միասնական և ավարտական – պետական քննու-թյուններին , քննությունների ընթացքում ապահովել օբյեկտի-վություն և խստապահանջություն:	Մեթոդմիավորում ն.նախագահներ ուս.գծով տնօրենի տեղակալ	Ապրիլ, մայիս
27	Սահմանել ուսուցչական հերթապահություն, որի միջոցով դպրոցում ամրապնդել գիտակցական ու ներդպրոցական կարգապահությունը,պատշաճ բարձրության վրա դնել դպրոցի սանիտարա հիգիենիկ վիճակը:	տնօրենի տեղակալներ, դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
Ե	**<u>Դպրոցի համատեղ գործունեությունը ընտանիքի, հասարա-կության հետ</u>**		
1	Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում հսկայական է ընտանիքի և հասարակության դերը, որոնք երե-խաների մեջ պետք է դաստիարակեն հայրենասիրություն, ամենուր պահպանել աշակերտական վարքի և ձևածքի կանոնները, հարգանք մեծերի նկատմամբ,հոգատարություն, ընկերասիրու-թյուն, վարքագծի կուլտուրա, գեղեցիկի զգացում,ինքնուրույնություն՝ համագործակցելով դպրոցի հետ:	տնօրենի տեղակալներ, դասղեկներ	Ուս տարվա ընթացքում
2	Դպրոցի մանկավարժական խորհրդի գերխնդիրն համարել սերտ համագործակցությունը ընտանիքի, ծնեղների հետ, նրանց ուժերը նպատակա-մղել սովորողների հայեցի և ներդաշնակ դաստիրակությանը, արժեքային համակարգի ձևավորմանը;	տնօրեն, տնօրենի տեղակալներ,	
3	Ուժեղացնել ընտանիքին տրվող ամենօրյա մանկավարժական օգնությունը:Ընտրել ծնողական կոմիտե, ծնողական խորհուրդ: Տարվա ընթացքում գումարել երկու ծնողական ընդհանուր ժո-ղով,կիսամյակը մեկ նաև մեկական նիստե:Ծնողկոմիտեի նիս տերի ընթացքում հաճախակի լսել ծնողների ինֆորմացիաները: Ամենօրյա համագործակցված աշխատանքի միջոցով էլ ավելի բարձրացնել ծնողների պատասխանատվությունը սովորողների կրթության և արժեքային համակարգի ձևավորման գործում:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Ուս տարվա ընթացքում
4.	Դպրոցում արմատապես բարելավել ծնողական և աշակերտա-կան խորհուրդների դերը, նրանց ընդգրկել ուսման կարևորագույն ու որակյալ գործառույթներում:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ :	Ուս տարվա ընթացքում

5	Ակտիվացնել դպրոցական և դասարանական ծնողական խորհուրդների գործունեությունը, յուրաքանչյուր հուզող հարց լու-ծել ծնողական խորհուրդների միջոցով: Ամրացնել դպրոց- ծնող-հասարակություն եռաստիճան կապը՝ հօգուտ սովորողների կրթադաստիարակչական աշխատանքների որակական բարձրացմանն ու արդյունավետությանը:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ	Ուս. տարվա ընթացքում
6	Կրթօջախում հաղթահարել սոցիալական խոչընդոտները, մշակել համապատասխան վերաբերմունք, վերացնել կարծրատիպերը մանկավարժների ու սովորողների շրջանում,		
7.	Ծրագրավորել և անցկացնել ՊՈԱԿ-ի 2022-2023 ուս .տարվա գործունեության ներքին գնահատումը: Ստեղծել հանձնաժո-ղով , կազմել ծրագիր, վեր հանել գործառույթները, գնահա-տել արդյունքները, խրախուսել լավագույններին, հրապարա-կել ներքին գնահատման հաշվետվությունը:	Տնօրինություն, հանձնաժողով	Ապրիլ, օգոստոս
	<u>Ֆինանսատնտեսական գործունեություն</u>		
1	Կազմել դասաբաշխում և ներկայացնել մանկավարժական խորհրդի հաստատմանը	տնօրեն	մինչև 30.08.2022թ
2.	Ժամանակին կազմել հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները և ներկայացնել կառավարման խորհրդի քննարկմանը		
3.	Համաձայն ՀՀ կառավարության կողմից նախատեսված բյուջետային հատկացումների , կազմել ամենամյա ծախսերի նախահաշիվ և ներկայացնել կառավարման խորհրդի քննարկմանը:	տնօրեն , հաշվապահ	հունվար, նոյեմբեր
4.	Ղեկավարել գույքագրման աշխատանքները:		